

Հարց

Ե՞րբ է Հանձնաժողովը մերժում հայտը:

Պատասխան

Հանձնաժողովը հայտը մերժում է, եթե՝

- 1) հայտատուի ներկայացրած փաստաթղթերը կամ տեղեկությունները չեն համապատասխանում օրենքների կամ այլ իրավական ակտերի պահանջներին.
- 2) լիցենզիա տալու դեպքում սահմանափակվում է մեկ այլ լիցենզավորված անձին տրված իրավունքը.
- 3) լիցենզավորվող գործունեության իրականացումը կհանգեցնի էներգետիկայի բնագավառի հուսալիության և անվտանգության խաթարման կամ Արցախի Հանրապետության բնական պաշարների անարդյունավետ օգտագործման կամ չի համապատասխանի Արցախի Հանրապետության էներգետիկայի զարգացման հեռանկարային ծրագրերին.
- 4) հայտատուն օրենքի, այլ իրավական ակտերի կամ իր կանոնադրության համաձայն իրավունք չունի զբաղվելու հայցվող լիցենզավորման ենթակա գործունեության տեսակով, կամ գտնվում է սնանկության կամ լուծարման գործընթացում: